

Յ Ա Ռ Ա Ջ Ա Ք Ա Ն

Հրատարակելով այս մենագրութիւնը Յակոբ Դ. Ջուղայեցիի մասին, յաւակնութիւնը չունինք ամէն ինչ ըսած ըլլալու: Սակայն կը կարծենք թէ անոր կաթողիկոսական գործունէութեան երկար շրջանը ըստ բաւականի ներկայացուցած ենք անաչառ հոգւով:

Ընթերցողը հոն պիտի գտնէ՝ շրջանին համառօտ պատմութեան հետ, Յակոբ Ջուղայեցիի կենսագրական գծերը՝ կաթողիկոսութենէն առաջ, անոր կալուածատիրական և շինարարական գործունէութիւնը՝ իր գահակալութեան ընթացքին, անոր նպաստը՝ հայ մշակոյթին, յարաբերութիւնները՝ Պարսկական ու Օսմանեան իշխանութեանց, և Գանձասարի, Աղթամարի, Սսի, Կ. Պոլսոյ, Երուսաղէմի, Լեհաստանի և Հռոմի Ս. Աթոռին հետ, և հայ ազատագրական շարժումը՝ ակնկալութեամբ քրիստոնեայ Եւրոպայի օժանդակութեան:

Ջանացած ենք յստակօրէն ներկայացնել կաթողիկոսին բազմահոգ ու բազմաշխատ կեանքին երբեմն բարդ դէպքե-